

2004

F014

3414

Printed in Turkey

849-GRZ

ԿՈՆԴԱԿ ՊԱՏՐԻԱՐԻԱԿԱՆՆ

ԵՒ

ԿԱՆՈՆԳԻՒՐԻ ԶԱՐՍԱՆԵԱՑ

ՈՐ

Հաստատեցաւ յօգուտ Ազգիս
աշխատութեամբ Ազգային երկուց յոցոյց
Եկեղեցականաց եւ Աշխարհականաց
եւ

Հրամանաւ

Տ. Տ. Յակոբայ Արքեղիսիոյոսի
Ազգասեր եւ Վեհափառ Պատրիարքի
Կոստանդնուղոջոյ
Տղազրեցաւ

Printed in Turkey



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԸՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

- 1849 -

1868

281.6



~~89
39~~

45
4-76



ՊՏՐԻՔ

ԻՏԷՐ Յակոբ Արքեպիս-
կոպոսէ , և է
մեծի Արքայանիստ Մայրաքաղա-
քիս Կոստանդնուպօլսոյ :

Յորմէ տիրանուէր ողջունիւ
և օրհնութեամբ յայտարարուի
լիցի համօրէն ազգիս լրութեան ,
չնորհափայլ Քարողիչ վարդապե-
տաց , խոհեմազարդ Քահանայից ,
սղգախնամ Իշխաննդտաց , սեր-
ասպատիւ Իշխանաց , յարգելի

ԴՍ-ՊՊՍՐ

Արհեստաւորաց, և համայն բարեպաշտօն յողովորոցդ արանց և կանանց, որ թագաւորեալ Մայրաքաղաքիս մէջ կը բնակիք:

Աստուծոյ ստեղծուածներուն մէջ, մարդս միայն բանական և մտաւոր կենդանի ըլլալով, իր ամէն գործերը այնպիսի խոհեմութեամբ կարգադրելու է որ՝ իւր վիճակը և կենցաղավարութիւնը ըստ ամենայնի բարեկարգ ըլլայ, և աղքատուէ ու զանազան դիպւածոց վտանգներէն ազատ ըլլայ:

Այնպիսի զգուշութիւններուն մէկն է՝ ժամանակին պարագայները նկատելով՝ ամէն գործերը չափաւորութեամբ կանոնաւորել, և օտարի մը օրինակին չի հետեւելով, բոլոր կենաց մէջ խաղաղութեամբ ու հանգստութեամբ ապրիլ: Ահա այս մտածելով հիմակուան Ազգային ժո-

զովք հասարակաց օգտին համար
 պէտք եղած ամուսնական առաջի-
 կայ կանոնները սահմանեց, որով
 հետեւ մարդկային ընկերութե-
 մէջ հարկաւորեալ գործողութեց
 մէկն ալ հարսանեաց արարողու-
 թիւնն է, որ անով մահկանացու
 մարդոց տեսակը՝ որդւոց յորդի-
 յաջորդելով՝ իւր սերունդին մէջ
 կ'անմահանայ, և Քրիստոսի սբ
 Աշխղեցին օրէ օր աճում կը գլու-
 նայ և կը շատնայ. և գրեթէ
 տուն չի կայ՝ որ հարսնիք չըլլայ.
 Բայց մեր ազգին նայելով՝ այս
 գովելի արարողութիւնը և սուրբ
 պատկի խորհուրդը, տգիտաբար
 այնպիսի աւելորդ ու անգոսնելի
 սովորութիւններով խառնուած
 էր որ՝ գրեթէ հարսնիք եղած
 տան մը մէջը Աշխղեցւոյ խոր-
 հուրդ կատարուելիքը անյայտ ըլ-
 լալով, միայն թէ ուտելու խմե-

լու և զուարճանալու տեղ մը կը ձեւանար, թող որ այս ուրախու-
թեան ու սիրոյ հանդէսը, քիչ
ժամանակէ ետեւ՝ մանաւանդ թէ
չատ հեղնոյն հարսանեաց օրերը,
կուուոյ և ատելուէ, և տնաւեր
խռովութիւներու պատճառ կ'ըլլար:

Քանզի երբեմն կը պատահէր՝
որ աղջրկան կողմէն խռովութի
գրգռելով՝ ծանր ու սիրտ կոտ-
րող խօսքեր կ'ընէին փեսային
կամ անոր ճնողացը ըսելով թէ՝
այս ըռզակը քիչ ու անվայել է
մեր աղջրկանը, և երբեմն ալ
փեսային կողմէն ատելութի ցոյց
կուտային հարսին կամ անոր ծը-
նողացը՝ ըսելով թէ՝ բերած օժի-
ւոր (ճէհէզը), քիչ է ու իրեն չի
վայելեր, հասցա ո՛ւր թողունք ըս-
տակի առուտութիւնով ամուսնացե-
լոյ երկու կողմէն եղած սոսկալի
կռիւները:

Ահա այս կերպ անվայել խը
 ուովու թիւնները երկու կողմէն
 արմատանալով՝ շատ անգամ պա-
 տահած կայ որ՝ նորասպակ առն
 և կնոջ մէջ ալ կը մտնէր զգուելի
 ատելու թի մը և իրենց հոգեւոր
 կորստեանը ու մարմնաւոր թըշ-
 ու առուէն ալ պատճառ կ'ըլլար :

Հապա՛ այն հարսնիքի տէրե-
 րուն ըրած աւելորդ ծախքերը
 (մասրաֆները) որ կ'ընեն անմը-
 տադրութեամբ՝ թէ ըռզակի և
 թէ ճէկէլի համար, կամ թէ
 չնչին ու անպիտան հանդէսնե-
 րու համար, իրենք զիրենք կա-
 մօք կը ձգեն աղքատութեան ու
 պարտուց խորխորատը և կը տա-
 ուապին չարաչար յուսահատու-
 թեամբ : Ասն զի շատ զաւակի
 տէր եղողը՝ անգամ մը ըրածը չը
 բաժը չի գիտնալով, ու անպի-
 տան կարծիքներով իրեն կարո-

զուժեճնէն վեր ծախքեր ընելով՝
 հազիւ թէ մէկ զաւակը կրնայ
 ամուսնացընել, ու միւս զաւակը
 ներք կը թողու անխնամ. որով
 հետեւ կ'ուզէ որ անոնք ալ առ-
 ջինին նման մեծամեծ ծախքերով
 ու սնտախ հանդերձանքներով ա-
 մուսնացընէ. և զի ժամանակը
 չի ներեր կամ կարողութիւնը չի
 տանիր՝ ակամայ երեսի վրայ թու-
 զուլ կը պարտաւորի, ուրկէ ինչ
 խելքէ դուրս տարածայնութիւն
 և պէսպէս չարիք կը հետեւին
 նէ, յայտնի է:

Իսկ մէկ զաւակ մը ունեցողը
 այն անկարգ և վնասակար սովոր-
 ութիւններուն համար՝ որ ազ-
 դիս մէջ արմատացեալ է՝ շատ
 ստակէ ելլելով ուրիշներէն վար
 չի մնալու համար ինքն ալ անըզ-
 դու շարքար կ'իյնայ ազքասութե
 մէջ, ու թշուառ յուսահատութիւն

Թէպէտ կը զըզջայ իւր զաւակը
ամուսնացունելուն , բայց իր կու
րողուն իր ձեռքը չանցնելէն ետե ,
ողորմելի կենօք մահուան կը փա
փաքի՝ որ տառապանքէն ազատի :

Այնպիսի մարդը՝ չէ Թէ մի
նակ իր անձին կը մնասէ , այլ և
ընկերին , չէ Թէ լոկ իր վարկու
մը (իթիպարը) կը կորսընցընէ ,
այլ և բարեկամին ալ մեծ գայ
Թակղու թիւն կուտայ , որ իրեն
հաւասարները կամ Թէ արհես
տակիցները անկէ վար չի մնալու
համար՝ կը ջանան որ անոր նման՝
կամ աւելի աղէկ ըրած ըլլան ի
րենց հարսնիքը , որով կուբաբար
իրենք ալ կ'իյնան նոյն թշուա
ռութեան խորխորատը և մեծ
նեղութիւն կը քաշեն , միանգա
մայն կորսընցընելով իրենց պա
տիւր հասարակութեան առջին :

Ահա ասանկ անտի և մնասա

կար սովորութեանց գործածու-
թիւնովը ազգիս հասարակութե-
կրած գէշ հետեւանքները ընդ-
հանուր ազգիս հոգեւորական
և մարմնաւորական յողովներ-
րուն յայտնի ըլլալուն, այս ան-
գամ կրկին և կրկին խորհրդակ-
ցութիւն հասարակաց օգտին հա-
մար Ազգային յողովին մէջ խօս-
ուեցաւ, և հարսանեաց բարե-
կարգութեան համար յատկապէս
որոշակի կանոնադրութիւն հաս-
տատուեցաւ, և ամէն մէկուն
ընելիք ծախքերը և հարսանեաց
կերպը՝ ութ աստիճանի կարգաւ
նշանակելով, նորոգ տաղաքեցաւ
այս կոնգակը, որպէս զի իւրա-
քանչիւր ոք իր կարողութեանը
համեմատ շարժելով՝ գոնէ առ-
այժմ ազքատութեան գլխաւոր
պատճառներէն մէկը ազգիս վը-
րայէն վերնաց, ու հասարակու-

Թեան բարեկարգ զարգացմանը
յոյսերնիս հաստատ ըլլայ :

Ուստի սիրովն Յիսուսի կը
յորդորեմ ամէնքնիդ ալ, որ այս
նորոգ սահմանեալ կանոնադրու-
թեանցս հակառակ վարմունք չը-
նելով առանց զանցառու թեան
ձեր պարտաւորութիւնը կատա-
րէք հնազանդութեամբ, որով և
ազգային բարեկարգութեց յա-
ռաջադիմութեանը օգնական ըլ-
լալով ազգիս փառքն ու պատի-
ւը եվելցընէք :

Ողջ լերուք և օրհնեալք ՂԿՍ
տուծոյ և յամենայն սրբոց նորա,
և 'ի մէնջ, ամէն :



Մ Ա Հ Մ Ա Ն Բ Ե Ի Կ Ա Ն Ո Ն Բ

Որոնք հրատարակուեցան հարսանեաց
բարեկարգութեանց համար :

Յամին 1848 մայիս 18

Կ Ա Ն Ո Ն Ա .

Ինչպէս որ ազգային սովորու-
թիւն է , նշանտուքը միշտ պի-
տի ըլլայ ուրբաթ օր Պատրիար-
քարանի մէջ , և ամուսնացող
անձանց տաներէց քահանաները ,
ու երկու կողմէն մերձաւոր ազ-
գականները պիտի գտնուին :

Կ Ա Ն Ո Ն Բ .

Մինչեւ այսօր ազգիս մէջ նը-
շանտուքի համար որոշուած խոր-
հրդաւոր կանոն մը չի կար , մի-
այն ոսկի դրուեր էր նշան ըլլա-
լու համար , այն ալ իւրաքան-
չիւրոց իրենց կամացը համեմատ
աւելորդ ծախքերով :

Ուստի ազգային Դողովը խոր-

հրրդաւոր բան մը ընելու համար,
 և մանաւանդ հասարակաց օգու-
 տը նայելով սահմանեց թէ նշա-
 նը ըլլայ խաչ, և այն խաչը առ-
 նուի աղքատաց համար սահման-
 եալ աղգային գանձանակին յար-
 գի տեսուչներէն, որ ութ աս-
 տիճանի կանոնով՝ արժէքին կող-
 մանէ ալ ութը կերպ տարբերու-
 թիւն ունի, և նոյն արժէքէն՝
 թէ խաչին ծախքը, և թէ նշան-
 տուքի աւուր Պատրիարքարանի
 յատկացեալ ծախքերը հանելէն
 ետեւ, որ է գրագրին և այն տե-
 ղի սպասաւորներուն և անվարձ
 ժամկոչներուն պարգեւները, ա-
 ւելորդը աղքատաց և որք աղջը-
 կանց գանձանակին անպատճառ
 պիտի տրուի, նմանապէս ՚ի նպաստ
 Աղգային հիւանդանոցի փորձա-
 նաւոր և որք տղայոց, հարսնա-
 ցուին կողմանէ նոյն նշանտուու-

Թեան օրը ըստ աստիճանի տուրք պիտի առնուի :

Ինչպէս երկու կողմի այսինքն՝ փեսայացուին և հարսնացուին վճարելու տուրքերը որոշեալ հաշուէցուցակէն կը յայտնուի :

Խաչերուն աստիճանը , և հարսին կողմէն նշանտուրքի տուրքը :	Խաչերուն բռնի արժեքը	Հարսնացուին արժեքը
Առաջին աստիճանի վերին անձանց (էլրա)	200	200
Երկրորդինը	400	150
Առաջին աստիճանի միջակ անձանց (էլրա էսնաֆին)	300	100
Երկրորդինը	200	75
Առաջին կարգի միջակ անձանց (էվսատ էսնաֆին)	150	50
Երկրորդինը	75	25
Առաջին կարգի ստորին անձանց (էտնա էսնաֆին)	50	20
Երկրորդինը	25	

ԿԱՆՈՆ Գ .

Ինչպէս որ յայտնի է , հարսանեաց մէջ կատարուելու գլխաւոր


գործը պտակի խորհուրդն է, և
պտակը ընողն ալ տաներէց քահա-
նայն կ'ըլլայ, որ իւր պաշտօնը հո-
գեւորապէս կատարելովը, հարսա-
նեաց տէրերն ալ կը սլարտաւորին
իրենց շնորհապարտու թիւր ցու-
ցընելու մտօք անոր մէկ նուէրք
մը մարմնաւորապէս ընծայել, որն
որ ժողովրդատէր քահանային ան-
ժխտելի իրաւունքն է, որովհետեւ
քահանայք ալ ժողովրդոց կամա-
ւոր տուրքէն պիտի շահուին, ինչ-
պէս սրբազան Առաքեալը բացար-
ձակ կը գրէ, թէ մենք ձեր մէջը
հոգեւորը կը սերմանեմք՝ մե՞ծ
բան մըն է ձեզմէն մարմնաւորը
հնձել՝ այսինքն, ընդունիլ. և յի-
րաւի թէ որ հոգին մարմինէն
մեծ է, քահանայից հոգեւորական
գործերն ալ մեծ համարուելով՝
ստակով չի փոխանակուիր, միայն
թէ սիրով և յօժարուք զանազան

առիթմներու մէջ անոնց վճարելու
է բաւական նուէրք մը՝ որ կարող
ըլլան իրենց պիտոյքը հոգալու :

Ահա այնպիսի առիթմներէն
մէկն ալ հարսանեաց արարողու
թիւնն է, որուն համար մինչեւ
հիմայ կանոնաւոր որոշում մը ե-
ղած չըլլալով, արտառոց սովո-
րութիւններ մտած էր հարսան-
եաց մէջը, ինչպէս են մոմի քի-
թը կտրել, հալաւ վերցընել,
չաքար բաժնել, կամ թէ ըստ
այլազգաց կինայ դնել կամ խաղ-
ցընել տալ : Այս անպատշաճ
գործերը ըստակ տալու միջոց մը
ըլլալով՝ հարսնիքին տունը մէկ
անօրինակ զբօսարանի մը տեղ կը
նմանէր, ու սլսակի խորհրդին
յարգը կ'աւրէր, վասնորոյ այժմ
բոլոր այս անպիտան գործերը ար-
գելուած է, բայց միայն թագա-
ռութեան ժամանակը քահանայն

օրհնեալ գինի պիտի տայ պսա-
կելոց, որ քրիստոնէական ուղ-
ղափառ Աշկեղեցւոյ հին բարե-
պաշտական արարողութիւնն է,
և այն առանց մէկ ստակ մը տա-
լու կամ առնելու: Իսկ քահա-
նային տրուելու նուէրքին չափը,
իւրաքանչիւր անձանց տուած նը-
շանի խաչին աստիճանին նայելով
պիտի ըլլայ, և անկէ ՚ի զատ ոչ
թէ միայն փեսայն՝ այլ ով որ է նէ՝
բնաւ ստակ մը տալու առ իթ չունի:

Հարմարութեան աւուր որոշեալ տուրք, որ անպատ- ճառ պիտի վճարուի:	Հարմար- ութիւնը:	Պատ- րաստ: ՂԷԶ.
Առաջին աստիճանի (էլա)	150	1500
Երկրորդինը	100	800
Ա. աստի (էլա էսնաֆին) .	75	500
Երկրորդինը	50	350
Ա. կարգի (էփսատ էսնաֆ)	40	200
Երկրորդինը	30	100
Ա. կարգի (էսնա էսնաֆին)	20	50
Երկրորդինը	10	25



Ահա այս որոշեալ տուրքերը կամ փեսայացուն կամ անոր կողմէն մէկը պիտի վճարէ անպատճառ իր տաներէցին, հրամանագիր առնուած օրը. նոյնպէս հարսնացու աղջկան ծնողքը կամ անոնց կողմէն մէկը պիտի վճարեն նոյն օրը աղջկան տաներէցին, այս որոշեալ տուրքերը, ինչ աստիճանի արժանաւոր են նէ, որովհետեւ երկու կողմի տաներէցները զատ զատ պաշտօն ունին, զատ զատ պիտի ընդունին իրենց ժողովուրդին նուէրքը կանոնեալ կերպով. իսկ տրանակ աղքատաց հարսնիքները ձրի պիտի կատարուին ըստ անի:

Այլ թէ ոմանք անհոգ մարդիկ՝ ինչպէս որ լսած եմք, չըսեն թէ այսօր կամ վաղը պատրաստու թիւն չունիմք վճարելու մեր պարտքը՝ օր աւուր երկարածգե-

լու մտօք , այնպիսեաց համար
 ալ կը յորդորեմք՝ որովհետեւ ու-
 բիշ աւելորդ ծախքեր ընելու
 չեն , հարկաւ քահանային տալու
 որոշեալ տուրքը փութով հա-
 տուցանեն Պատրիարքարանի մէջ ,
 որ օր հրամանագիրը կ'ընդունին :

ԿԱՆՈՆ Դ .

Հին սովորութիւններէն մե-
 կրն է փեսայացուին ընծայն , որ
 (ընդակ անունով) կուտայ հար-
 սին . նմանապէս հարսնացուն իր
 բերած օժիտէն (ճէհէղէն) զատ՝
 քանի մը կտոր հագուստի ծրար-
 ներ (պօխճալըխ անունով) կամ
 ուրիշ ոսկեղէն կամ արծաթեղէն
 բաներ կը պատրաստէր ընծայել
 փեսին , կամ անոր հօրը , կնքա-
 հօրը և այլ մերձաւոր ազգական-
 ներուն : Արդ՝ այս կերպ առու-
 տուրէն՝ բուն սուջի անգամին ,

ինչ սոսկալի ատելու թիւններ ,
կռիւներ , ու տարածայնութիւ
ներ սգատահած կան նէ , ամէ
նուն յայտնի է , դեռ ընտանե-
կան սէրը չի հաստատուած ան-
հաշտ թշնամութեամբ իրար ա-
տելու դիպուածները , հազար
ու մէկ անգամ տեսնուեր ու լըս-
ուեր է , ահա այս տնաւեր ըն-
ծայատուութեան գործը բոլորու-
մին արգիլեալ է , և յողովը ու
րոշեց թէ՛ փեսին տալիք ընծայն ,
թէ՛ հարսին բերելիք օժիտը՝ այն
կերպով ընելու որ բնաւ մէկը չի
համարձակի կանսնած սահմանէն
դուրս բան մը ընել , կամ երկու
կողմանց իրարու (սաչը անունով)
ընծայներ տալ , թէ՛ հարսնիքէն
առաջ , և թէ՛ վերջը : Իսկ փեսին
տալիք ըռզակը անպատճառ պսակ
ման ժամանակը պիտի տրուի , չէ
թէ հարսառ գնալու ատեննին :

Ընդհանրությունն արժեքը :		Ղուռուռչ.	
Ա. աստիճանի . (էլա)		15000	էն 20000
Երկրորդինը		12000	էն 15000
Ա. աստի . (էլա էսնաֆին)		8000	էն 10000
Երկրորդինը		4000	էն 5000
Ա. կարգի (էվսատ էսնաֆ)			2500
Երկրորդինը			1000
Ա. կարգի (էանա էսնաֆ)			500
Երկրորդինը			150

Հարսնացուներուն ճեհեզին արժեքը :	ճեհեզի արժեհ .	Թեւեւեւեւ եւեւեւեւ Տրմ.
	Ղուռուռչ.	
Ա. աստի . (էլա)	15000 էն 20000	100
Երկրորդինը .	12000 էն 15000	80
Ա. (էլա էսնաֆին)	8000 էն 10000	70
Երկրորդինը .	4000 էն 5000	60
Ա. (էվսատ էսնաֆ)	2500	50
Երկրորդինը .	1000	40
Ա. (էանա էսնաֆ)	500	50
Երկրորդինը .	150	40

Ահա այս կանոններէն դուրս
բնաւ մէկ ստակի մը ընծայ կամ
այլ ինչ , երկու կողմէն ալ սխախ
չի տրուի :

Աղգակործան չար սովորութի մըն ալ կայ՝ Դրամս անուսով ստակը՝ որ մեր մէջը օտար աղգերէն դեռ նոր մտած է, աս բանին համար խստիւ կը պատուիրեմք՝ որ բնաւ երբէք ստակ մը չի պիտի տրուի աղջկան կողմանէ փեսայ եղողին, վասն զի թէ որ փեսացուն անով պիտի շահուի, ու ինքը մինչեւ այն ժամանակը վաստրկող մէկը չէ՛նէ՛ անկէ ետեւ ալ չարագոյն թշուառութեանց մէջ խնալիքը յայտնի է, ուստի առաջուց մտածելը խելացութիւն է՝ թէ այն ստակը հատնի նէ՛ ի՛նչ պիտի ընէ, ուրեմն աղգին աղքատ տուն մը եվելընեւ լովը՝ ինքը շահ մը չընեւ լէն զատ՝ մեծ մնաս ըրած կը սեպուի: Բայց թէ որ վաստրկվոր է, ու աղջրկան քիչ կամ շատ բոտակին կարօտ չէ, ու կ'ուզէ որ

այն կերպով ստակը ձեռքը ան
ցրնէ , այնպիսին ալ ագահու
թեան ոգի ունենալովը , ամուս
նական սիրոյ կապը իր ագահու
թեանը միջոց մը բռնած է . ուս
տի այսպիսի անվայելուչ ճամբայ
բռնող մարդիկ՝ աւելի թշուառ
եղեր են իրենց կենցաղավարու
թեանը մէջ՝ քան թէ երջանիկ .
վասն զի ամուսնացելոց խաղա
ղութիւնը դրամով չի հաստատու
ուիր , այլ ճշմարիտ սուրբ սիրով՝
որն որ Քրիստոս օրինակ կուտայ իր
եկեղեցւոյն , և սրբազան առա
քեալը կը յորդորէ մարդիկնե
րուն , որ իրենց կնիկները սիրոյն
խնամօք պատուեն , և կնիկներուն
կը պատուիրէ՝ որ իրենց տիրոջը
հնազանդ կենան ամէն կերպիւ :

Ահա այս է ամուսնացելոց ա
ռաջին և հարկաւոր պարտքը .
ուրեմն վայ է անոնց՝ որ այս պար

տաւորութիւնն չի ճանչնալով,
իրենց զաւակը թշուառութեան
խորխորատը ձեռքովն կը ձգեն,
զանոնք ստակով ամուսնացուցա-
նելով: Ուստի ինչպէս որ սբ Աշ-
կեղեցւոյն օրինաց դէմ է այս սի-
րոյ կապը քակուելու պատճառը,
անանկ ալ համօրէն ազգիս անըն-
դունելի է այս չար սովորութիւր,
որ ստակով հաստատել կ'ուզեն
իրենց սուրբ պսակի խորհուրդը:

Ասոր համար կը պարտաւորեմք
մեր ազգայինները, որ ոչ աղջկան
կողմէն ստակ արուի, և ոչ փե-
սին կողմէն ստակով աղջիկ փըն-
տըռուի, անկէ 'ի զատ՝ որ հայ-
րենական ժառանգութիւն ունի
աղջիկը, այն ալ շատ աղէկ կ'ըլ-
լար անանկ կարգի մը դնել՝ որ ի-
րենց հաստատուն եկամուտ մը
ճարելով՝ ձեռքերնին եղածը չի
կորսընցընէին:

Արովհետեւ հինուց սովորու-
թիւն է՝ որ հարսին քօղքը փե-
սայն կը խրկէ , ու սախ կը պարտա-
ւորին որ այս կանոնագրու թեան
ցուցակին համեմատ մինակ քօղ-
քը առնեն և տան , որուն թէ
վայելչու թեանը և թէ արժէքին
կողմանէ անասկները որոշելով
ստորագրած է , իսկ հարսնացու-
ին պէտք եղած (չէտիկ , բա-
բուճ , կամ բօղին) ոտքի ագա-
նելիքները աղջրկան կողմէն պիտի
ըլլայ , բնաւ վրան սկիէ՝ արծը-
թէ՝ կամ ինչ և իցէ կերպով զարգ-
մը չի պիտի գտնուի :

Իսկ հարսնիքի մամերը տալը
որ կնքահարին սովորու թին է , ա-
նոր համար ալ քօղքին արժէքին
համեմատ՝ որոշ արժէքներով կը-
շառքին չափը հոս նշանակուած

է, որ նոյն չափով անպատճառ Սայրէկեղեցւոյ ծախարանէն պիտի առնուի, բայց անոնց վրայ Խորպէլա և ուրիշ զանազան զարդեր կամ սուտ ծաղիկներ, բնաւ չըլլայ պիտի, ու հարսնիքէն ետեւ՝ նոյն աւելորդ մոմերը իւր կողմի կեղեղեցւոյն ընծայ ընելու է:

Քողքերուն օրոշեալ տեսակները և հարսնիքի մոմերուն կշաւքը:	Քօշտի արժէք. ՂԷՂ.	Մոմի չափ. Քաշ
Ա. աստիճանի (էլա) Վերստեւոյ	400	8
Երկրորդինը	300	7
Ա. (էլա էսնաֆին) Ճանֆէս	250	6
Երկրորդինը	200	4
Ա. (էվսատ էսնաֆին) Կիւմէլ	150	5
Երկրորդինը	100	2
Ա. (էսնա էսնաֆին) Կաֆէր	50	1 1/2
Երկրորդինը	30	1

Կ Ա Ն Ո Ն Զ .

Հարսանեաց օրը անխտիր ո՛ր
և իցէ ծանօթները կամ բարե-

կամները հարսնիք հրաւիրել պիտի չըլլայ՝ թէ ազգային ըլլայ՝ թէ օտարազգի, այլ փեսայն, իւր ծընողքը, եղբայրները, քոյրերը, և կնքահայրն ու կնքամայրը, ու մինակ տաներէց քահանայն պիտի հրաւիրէ, բայց իրիցկին երթալու սովորութիւնը վերցաւ:

Աիրակի կէս օրին՝ որ հարսառ պիտի երթան՝ յիշեալ անձինքներէն զատ՝ մէկ մարդ մը չի պիտի երթայ բնաւին, անանկ որ արք և կանայք վեց կամ ութ հոգի պիտի ըլլան, և հարսին տրուելու ըռզակը հետ չի պիտ տանին:

Հարսնացուն փեսին տունը բերուելուն պէս անմիջապէս հալաւն օրհնուի, և եթէ հարկաւորի փեսայացունին կամ ծնողացը խնդրանօքը աւելի քահանայ կանչել, նոյն կողմի Ակեղե-

ցիէն մէկ կամ երկու քահանայ
հրաւիրեն , որ ձայնակից ըլլան
տաներէցին , և յետ հալաւին
օրհնութեանը առանց սեղանի
պատրաստութեան , միայն շաքա-
րեղէն մը և քաղցր ըմպելի մը
արուի , ու այնուհետեւ տու-
ներնին դառնան , և թէ տանե-
րէցը հեռու տեղէ է , կանոնադ-
րութեան արգելք չըլլալու հա-
մար՝ ազատ է ուրիշ տուն մը եր-
թալու՝ թէ ժողովրդոց՝ թէ ազ-
գակցաց և թէ բարեկամաց :

ԿԱՆՈՆ Է .

Հարսնացուին տունն ալ չի
պիտի հրաւիրեն դրսէն մարդ՝
թէ ազգային թէ օտարազգի ,
մանաւանդ հարսանեաց բաղնի-
քին կանայք բազմութեամբ եր-
թալով կերակուր և ըմպելիք տա-
ներու չէն բնաւ , աւելորդ ու

անվայելուչ զարդերով իրենք ի-
 րենց (միւրվէթը տեսնանք ըսե-
 լով) հանդէսներ չընեն , այլ ա-
 մէն տեղ սլարկեշտութեամբ ըլ-
 լայ շարժմունքնին : Հարսնացու-
 ին տունը միայն ծնողքը՝ եղբայր-
 ները՝ քոյրերը՝ պիտի գտնուին
 շաբաթ օրու ընէ : Փեսայացուին
 կողմէն հարսառ գալը՝ որ կիրա-
 կի կէս օրին պիտի ըլլայ , թէ որ
 հարկ ըլլայ նէ՝ մօտաւոր ազգա-
 կաններէն կամ դրացիներէն հը-
 րաւիրուին՝ որ հարսնացուին նը
 շանին օրհնութեան ժամանակը
 ներկայ ըլլան , և յետ օրհնու-
 թեան զանոնք մէկ մէկ շաքարե-
 ղէնով և քաղցր ըմպելիով սրտ-
 ուելը ներեալ է , բայց հարսը
 տանելէն ետեւ եկող հարսնե-
 ւորները բոլորն ալ բարեմաղթե-
 լով անմիջապէս իրենց տունը
 դառնան , հարսին երթալու ետ-

զը մօտ ըլլայ նէ , քօղքով տանե-
լը ներեւի կ'ըլլայ , եթէ հեռու՝
հարկաւ պիտի ծածկըւին քաղա-
քիս սովորութեանը պէս , ու
հարսին տնէն մէկը չի պիտի եր-
թայ փեսային տունը՝ բայց 'ի
հարսնքուրէն :

ԿԱՆՈՆ Ը .

Պատկի խորհուրդին կատա-
րումը պիտի ըլլայ երկու շաբթի
աւտուն կանուխ , որ ատեն տան-
երէց քահանայն 'ի միասին առ-
նելով՝ ուրիշ մէկ կամ երկու քա-
հանայ ալ՝ թէ որ ուզվի , կամ
թէ ըսեմք նոյն կողմի Նկեղեցւոյն
քարոզիչ վարդապետը՝ կամ Պատ-
րիարքարանի կողմէն հրաւիրեալ
վարդապետ մը , և այլն , գան
հարսանեաց տունը՝ և նք պատկի
խորհուրդը կատարեն . այս միջո-
ցին հարկաւորի նէ հարսանեաց

տէրը կրնայ հրաւիրել իւր ազգականներէն կամ գրայիներէն քանի մի հոգի ալ և յետ կատարման խորհրդոյն՝ անմիջապէս պսակը վար առնելու կամ թագառութեան գործն ալ պիտի կատարուի . ետեւ հրաւիրեալ անձանց , նաեւ կիրակի օրէ գլուխուող ազգականաց ամէնուն առ հասարակ շտքարեղէն և ըմպելի մը տրուելով անյապաղ պարտաւոր են ետ դառնալ իրենց տունը կամ իրենց գործին . բայց հետեւեալ երեքշաբթի օրին իրիկունը , հարսնիքին տունը բնաւ մարդ մը չի պիտի գտնուի՝ թէ հարսին և թէ փեսին կողմէն՝ եթէ բարեկամ և եթէ ազգական , որովհետեւ արգելեալ է :

ԿԱՆՈՆ Թ .

Հարսանեաց տները բնաւ

գրտէն սպասաւորներ չի պիտի
 գտնուին . ոչ խոհարար (աշճի)
 ոչ սուրճ եփող (խահվէճի) որ
 շատ հեղ սափրիչները կ'ըլլան .
 ոչ մատակարար (քիւէրճի կամ
 վէքիլսարճ) և ոչ փեսացուն տա-
 նը մէջ պիտի գերծուի . այլ ինչ
 պէս ամէն անգամ , այնպէս ալ
 հարսանեաց օրը կրնայ սափրիչին
 խանութը երթալ ու հոն գերծ-
 ուիլ :

Բոլորովին արգելեալ է զբօ-
 սանքի համար նուագածուներ
 (չալղըճի կամ սաղէնտէ) բերել ,
 կամ ուրիշ խաղ հնարող մարդիկ-
 ներ (օյինճիներ) և այլն :

Կերակուրի կողմանէ հարսա-
 նեաց տանը սովորական կերպը պա-
 հելու է , բայց հարսնիքի անուամբ
 անուշեղէն կամ այլ տեսակ ա-
 ւելորդ ուտելիքներ բնաւ չըլլա-
 լէն զատ , ոչ փեսին կողմանէ

հարսին տուներ , և ոչ հարսին
կողմանէ փեսին տուներ , ուտե-
լիք կամ ըմպելիք չի պիտի խոր-
կուի . նմանապէս հարսառին ժա-
մանակ փեսին կողմէն պարգեւ-
ներ չի պիտի տրուի հարսին տու-
ներ , և ոչ յետ հարսանեաց փեսին
տուներ հարսին կողմանէն եկող
ները պարգեւ տալու են՝ որովհե-
տեւ ասպիտակն արգիլեալ է :

Կ Ա Ն Ո Ն Ժ .

Հարսնատեսու թեան գնալու
օրերնին՝ (որ է եկտի) և ձեռք
պագի օրը բնաւ երբէք կերակու-
րի պատրաստութիւն չի պիտի
ըլլայ , այլ միայն շաքարեղէն մը ,
ըմպելի մը , և խահովէ մը ըլլա-
լու է , ու նաեւ հարսանեաց
համար բաղնեպաններուն աւելի
ստակ պահանջելը լաճ ըլլալով՝
կը ծանուցանեմք՝ թէ ուր որ պա-

տահի այնպիսի ծանր պահանջ-
մունք , Պատրիարքարանս իմաց
տրուի , որ այն ծանրութիւն ինչ
և իցէ կերպով արգիլելու ճարը
հոգացուի :

Կ Ա Ն Ո Ն Ժ Ա .

Հարսանեաց տանը մէջ ստակ
ցրուելու անվայել սովորութիւ-
նը բնաւ մէկ անգամ մը չի պի-
տի ըլլայ , նմանապէս և հարսին
գրպանը (ճէպը) ստակ ձգելու
անպատշաճ սովորութիւնն ալ
բոլորովին արգելուած է , ու նա-
եւ երեստեսէ ըսուած պարգեւ-
ները , բնաւ մէկ կողմէն չի տրու-
ուին , ոչ փեսայն , ոչ անոր ծնող-
քը՝ և ոչ կնքահայրը կամ կնքա-
մայրը , և ոչ ազգականները , կամ
դրսէն բարեկամները տալու պար-
տաւորութիւն չունին . նոյնպէս
ալ փեսին՝ թէ հարսառի օրը և

Թէ ձեռքսագի օրը հարսին կողմանէ , մատնի կամ այլ ինչ ընծայ բնաւ չի պիտի տան , և ոչ փեսայն պիտի ընդունի :

ՎԵՐՉԱԲԱՆ ՈՒԹԻՒՆ

Ազգային զեղխութիւններուն պատճառ եղող անպատեհ սովորութիւնները արգիլելու համար, այս օգտակար կանոններուն լաւագոյն բարեկարգութիւններ յառաջ բերելիքը շուտով կը ճանչնան խելահաս եղողները . ուստի ամէն զգաստ և խոհեմ մարդիկ պիտի զգուշանան որ այս կանոնագրութեանցս հակառակ շարժելու մէկուն չի թողուն , որ բարի սովորութիւններ արմատանալով հասարակաց մէջ , օր աւուր ազբաւորութեան առաջն առնուելու ճարը նայուի , և ազգը խաղաղութեամբ ու անգորրութիւն

աւելի սրայծառանալու և առա-
քինութեամբ զարգանալու ար-
ժանաւորի յաջողութիւն Տեառն ,
և ազգասիրական խնամօք և
սրաշուտանութեամբ հոգեւորա-
կան և ազգային Եղբայրաց , որոց
նպատակն է մի միայն ազգայնաց
հանգստութիւնը ու փառքը :



